

ԱԽՏՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՁԱՅՆԵՑԵՔ, ՍԱՐԵՐ

Խաշամների տակ երազն է քնում...
Այն ո՞վ է սարում,
Դողդոջ ձեռքերով,
Իր ճերմա՛կ, ճերմա՛կ սփռոցը փռում:
Քունս չի տանում,
Աչքերիս առաջ ձիս է հրեղեն,
Մեր տնակը հին,
Որ կարոտի պես ձգում է իրեն:
Խաշամները չոր՝ չեն քնում ինձ պես.
Նրանց տակ միայն երազն է քնում:
Ի՞նչ ասես սրտին,
Երբ նրա ներսում
Բոցն է բռնկվել,
Հուրը՝ կարոտի:
Ձայնեցե՛ք, սարե՛ր,
Սիգապանձ սարեր,
Պատասխան տվե՛ք իմ այրվող սրտին.
Մայրս չի՞ արդյոք սփռոցն այդ փռում...
Խոսեցե՛ք, սարե՛ր,
Ինչու՞ եք լռում,
Ձեր լանջը ասես մեր այգին է հին,
Ուր առաջվա պես
Մայրս պիտ հանի հնձանից գինին...
Խաշամների տակ երազն է քնում,
Քունս չի տանում...
Ա՛խ, ինչ-որ մեկը հեռու սարերում
Մի ճերմա՛կ, ճերմա՛կ սփռոց է փռում:

Վառվում եմ լուռ կրակի պես,
Բորբոքվում եմ օրը օրին,
Կնոխրանամ մի օր էլ ես՝
Չուրս բաշխած անցորդներին:

Կգա մի օր մի գիժ քամի
Ու կխաղա մոխիրիս հետ,
Ցրիվ տալով նա կտանի՝
Թողած տեղը սևաթ մի կետ:

Կգան մարդիկ, կանցնեն լռին,
Չեն էլ նայի... կաճապարեն,
Ի՞նչ իմանան, թե ում սրտի
Երազներն են այնտեղ մարել: